Անվտանգություն եւ առաջընթաց

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 5000: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 10 ՄԱՐՏԻ 2017Թ.
№ 09 (427)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Մեր ձայնը՝ Առուշ Առուշանյանին, նա կարող է...

Հարցազրույց օրվա թեմայով

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ.

«Ասելս այն է, թող ծայրահեղություն չհամարվի, որ բոլորիս համար Հայաստանը սկսվում է Սյունիքից»

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջիկա ընտրությանը ՀՀԿ-ն պատգամավորի թեկնածու է առաջադրել նաեւ Առուշ Գագիկի Առուշանյանին՝ թիվ 12 ընտրատարածքում, որն ընդգրկում է Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերը: Առուշ Առուշանյանը 25 տարեկան է, բայց ճանաչում ունի Գորիս քաղաքում եւ հարակից տարածաշրջաններում: Ակտիվ, կամեցող երիտասարդի, գործարարի ու ձեռներեցի համբավ ունի: ՀՀ օրենսդիր մարմնում ընդգրկվելու-աշխատելու նրա ձգտումն, անշուշտ, հետաքրքրությամբ է ընդունվել հատկապես Գորիսի տարածաշրջանում: Ի՞նչ հանգամանքների մղումով է առաջադրվել պատգամավորի թեկնածու, ի՞նչ ասելիքով է ներկայանում ընտրողին, ինչպիսի՞ պատկերացումներ ունի խորհրդարանի եւ պատգամավորի մասին, տեղյա՞կ է արդյոք հանրապետության եւ հատկապես Սյունիքի մարզի հիմնախնդիրներին: Այդ եւ նման այլ հարցերի պարզաբանման նպատակով էլ զրուցեցինք պատգամավորի թեկնածու Առուշ Առուշանյանի հետ:

– Հարգելի՛ Առուշ, ողջունում ենք Ձեր որոշումը, մտադրությունը՝ ընդգրկվելու հանրապետության օրենսդիր մարմնում: Ձեռներեցություն, գործարարություն... Եվ հանկարծ՝ երկրի խորհրդարանում պատասխանատվություն ստանձնելու հայտ: Ինչո՞ւ, ի՞նչ հանգամանքների մղումով որոշեցիք գնալ այդ ճանապարհով:

– Խորհրդարանն այն հարթակն է, որտեղ կարող ենք ներկայացնել մեր հանրապետության հիմնախնդիրները, լուծ-

▶ 3

Իմ մասնագիտությունը

Ես՝ Առուշ Գագիկի Առուշանյանս, ծնվել եմ 1991թ. մարտի 12-ին Սյունիքի մարզի Գորիս քաղաքում: 1997-2007 ուսումնական տարիներին սովորել եմ Գորիսի Սերո Խանզադյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցում: 2007թ. ընդունվել եմ Երեւանի տնտեսագիտական համալսարանի ազգային տնտեսագիտության ֆակուլտետը եւ սովորել մինչեւ 2009թ.: Ելնելով նպատակահարմարությունից, 2009թ. տեղափոխվել եմ Գորիսի պետական համալսարան՝ տնտեսագիտության ֆակուլտետ եւ ավարտել 2011թ., որպես տնտեսագիտության բակալավր: 2012թ. ընդունվել եմ նույն ֆակուլտետի մագիստրատուրան եւ ավարտել 2014թ.: 2008թ. օգոստոս ամսից հիմնադրել եմ «Գոր մետալ» ՍՊԸ-ն: Հանդիսանում եմ «Գոր մետալ» ՍՊԸ-ի տնօրենը եւ զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ:
2016թվականից ՀՀԿ անդամ եմ: Ամուսնացած չեմ:

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ • 10 ՄԱՐՏԻ 2017Թ • № 09 (427)

25-ԱՄՅԱ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑ

Դարեր ի վեր մեր ժողովուրդը երազել է ունենալ անկախ եւ ազատ հայրենիք, հայկական պետություն: Սեփական պետություն ունենալու երազանքը պայմանավորված էր հայոց հողի վրա ամուր կանգնելու, մեր երկրի եւ մեր ապագայի տերը լինելու վճռականությամբ:

Չունենալով պետականություն՝ հայ ազգը պահպանել է իր ինքնությունը եւ կարողացել մշտապես զարգանալ եւ արարել: Պատերազմները, ճնշումները, բնաջնջման փորձերը դատապարտված էին անհաջողության՝ շնորհիվ մեր ժողովրդի կամքի ուժի եւ պահպանման կենտրոնների՝ հայկական ընտանիքի, մեր հավատքի եւ մեր լեզվի: Հայ ընտանիքը եղել է մեր արժեքները մեծից փոքրին փոխանցելու եւ սերունդների համերաշխության երաշխավորը: Պետականության բացակայության ժամանակներում մեր եկեղեցին կատարել է եւ՛ պետության պարտականությունները, եւ՛ եղել է գիտելիքի, լեզվի, ազգային ինքնության պաշտպանը: Այս բոլոր դժվարություններով հանդերձ՝ մեր ազգը երբեք չի կորցրել իր արժանապատվությունը, չի հրաժարվել անկախ Հայաստան ունենալու երազանքից, չի հանձնվել եւ, վերջապես, հասել է իր նպատակին:

Ազատ եւ անկախ ՀԱՅԱՍՏԱՆԸ թույլ է տալիս դարեր անց ունենալ մեր սեփական դիրքորոշումը, այն պաշտպանելու եւ նրա համար պատասխանատվություն կրելու կարողությունը:

Անկախության 25 տարիների ընթացքում մեզ դեռեւս չի հաջողվել իրականացնել մեր բոլոր նպատակները: Այդ ժամանակահատվածում մենք կարողացել ենք հաղթահարել բազմաթիվ դժվարություններ՝ երկրաշարժ, Արցախյան պատերազմ, ԽՍՀՄ-ի փլուզմամբ պայմանավորված սոցիալ-տնտեսական կապերի խզում, տնտեսության քայքայում եւ այլն:

Հարգելի՛ հայրենակիցներ,
Դաշտում հունձ անող գյուղացուց մինչեւ բարձրաստիճան պաշտոնյա, գործարարից մինչեւ նեղ ոլորտային մասնագետ, առհասարակ՝ ցանկացած աշխատավոր մարդ, ցանկացած մարդ պետք է լինի մեծարված, գնահատված եւ մշտապես գտնվի պետության ուշադրության կենտրոնում, քանի որ նրանք բոլորն իրենցից ներկայացնում են մեկ միասնական եւ արժանապատիվ կերպար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ անկախ պաշտոնից, դիրքից, մասնագիտացումից եւ սոցիալական կարգավիճակից: Հենց այս մարդիկ՝ Հայաստանի քաղաքացիներն են մեր երազած ապագայի երաշխավորները՝ բանիմաց, ջանասեր, հպարտ եւ ապագային նայող, այսօր այդ ապագան իրենց տքնաջան աշխատանքով կերտող:
Մենք պատրաստ ենք աշխատելու յուրաքանչյուրի հետ, ով ցանկանում է քարը քարի վրա դնել՝ մեր ընդհանուր տունը շենացնելու համար:
Մենք հավատում ենք մեր ժողովրդին, հավատում ենք աշխատելու, սովորելու, նորն ընկալելու եւ կիրառելու նրա ունակությանն ու պատրաստակամությանը:
Մենք հենվելու ենք ամուր եւ ավանդական ընտանիքի արժեքների վրա: Այո՛, ընտանիքը դիտարկում ենք որպես ողջ հասարակության մանրակերտ եւ պետության առաջընթացի կարեւոր խթան: Եվ հենց ընտանիքին բնորոշ համերաշխությամբ էլ հետեւողականորեն լուծելու ենք մեր առջեւ ծառացած բոլոր խնդիրները:
Փաստ է, որ մենք այսօր ունենք խնդիրներ եւ դժվարություններ, բայց այն պատմական ճանապարհը, որը մենք անցել ենք, այն դժվարությունները եւ խոչընդոտները, որոնք մենք միասին հաղթահարել ենք, պարզապես վերահիմաստավորելու դեպքում բավարար են, որպեսզի գիտակցենք, որ այսօրվա խնդիրները ոչ թե անհաղթահարելի են, այլ հե՛նց հաղթահարելի են: Եկե՛ք լինենք լավատես, լցվե՛ք ամուր հավատով եւ դժվարությամբ ձեռք բերած մեր պետությունն անվտանգ պահելով, առաջ ընթանալով՝ դարձնենք այն մեր երազած ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Այս տարիների ընթացքում հասել ենք բազմաթիվ հաջողությունների, բայց նաեւ ունեցել ենք բացթողումներ ու դեռեւս ունենք չլուծված խնդիրներ: Շատերի մոտ կուտակվել է հիասթափության, անվստահության, անարդարության եւ զայրույթի զգացում: Բազմաթիվ մարդիկ արտագաղթել են, լքել իրենց տունը, որպեսզի ավելի լավ կենսապայմաններ ապահովեն իրենց ընտանիքների համար: Այս ամենը նշանակում է, որ մենք դեռեւս չենք կառուցել մեր երազած երկիրը:

Բայց մեր ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում երբեք չի հրաժարվել իր երազած երկիրն ունենալու գաղափարից, առավել եւս հիմա դժվարություններն ու սխալները չեն կարող խոչընդոտ հանդիսանալ մեր երազանքն իրականություն դարձնելու համար: Չէ՞ որ չի սխալվում միայն նա, ով ոչինչ չի ձեռնարկում: Դասեր քաղելով մեր սխալներից՝ անմնացորդ աշխատանքով մենք շարունակելու ենք կառուցել մեր երազած երկիրը՝ ազատ, անկախ, արդար եւ ինտելեկտուալ Հայաստանը:

Մենք ազատասեր ժողովուրդ ենք, եւ դա ենթադրում է ազատությունը պաշտպանելու, հայրենիքի անվտանգությունն ապահովելու պարտականություն: Անվտանգ պետք է լինեն հայկական գյուղը, քաղաքը, պետական սահմանը, իսկ այդ անվտանգության կենտրոնում պետք է միշտ լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

Մենք ստեղծարար ժողովուրդ ենք, եւ դա ենթադրում է առաջընթացի համար անհրաժեշտ՝ առավել արդյունավետ պայմանների առկայություն: Ստեղծելու եւ ստեղծագործելու համար հավասար հնարավորություն պետք է ունենան բոլորը, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի:

Ժամանակն է, որ մեր այս երազանքը վերածվի իրականության: Ժամանակն է, որ փոխվենք եւ փոխենք մեր իրականությունը: Ոչ ոք մեր փոխարեն չի ապրելու մեր կյանքը, ոչ ոք մեր փոխարեն չի անելու մեր գործը:

Մե՛նք ենք, որ պետք է անընդհատ բարձրացնենք մեր անվտանգության մակարդակը, մե՛նք ենք, որ պետք է առաջընթաց ապահովենք: Մե՛նք, եւ ուրիշ ոչ ոք:

Եվ մենք պատրաստ ենք մեր ժողովրդի աջակցությամբ անընդհատ կատարելագործել մեր անվտանգության ողջ համակարգը՝ ընդլայնելով նրա տիրույթները մինչեւ սոցիալական պաշտպանություն, մարդու կյանքի, սեփականության եւ այլ իրավունքների պաշտպանություն, պարենային անվտանգություն: Մենք պատրաստ ենք հավասար հնարավորությունների ստեղծման մեր տեսլականն իրականություն դարձնել՝ էապես խթանելով մեր երկրի առաջընթացը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԱՄԱՐ

Մենք ապրում ենք մի տարածաշրջանում, որտեղ կան բազում սպառնալիքներ ու վտանգներ, մեծ է զինված բախումների հավանականությունը: Ադրբեջանի ապրիլյան արկածախնդրությունը եւ դրա վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշումը կրկին ապացուցեցին, որ մեր երկրի անվտանգության մակարդակի անընդհատ եւ հետեւողական բարձրացումն այլընտրանք չունի:

Ոչ մի ազգ եւ ոչ մի երկիր մեր կողմից չի ընկալվում իբրեւ թշնամի: Նույն կերպ հայ ժողովուրդը պահանջել եւ պահանջելու է, որ հարեւան երկու երկրների իշխանությունները դադարեցնեն հայ ժողովրդի գոյության, ինքնիշխանության, կայուն ու անվտանգ զարգացման իրավունքը մերժող ու սեփական հասարակությանը դեպի բռնություն եւ այլատյացություն մղող քաղաքականությունը:

Մեր գործողությունները շարունակելու ենք ուղղել առաջին հերթին ազգային անվտանգության ինչպես առկա, այդպես էլ հնարավոր ռազմաքաղաքական սպառնալիքների, ռիսկերի եւ մարտահրավերների բացահայտմանն ու չեզոքացմանը, մեր ազգային բանակի մարտունակության շարունակական բարձրացմանն ու սպառազինմանը:

Անվտանգության համակարգերի բարեփոխման շարունակականությունն ու ժամանակակից պահանջներին համապատասխանեցումը, արտաքին մարտահրավերների կանխարգելմանն ու համարժեք պատասխանի ապահովմանն ուղղված քայլերը ներառել են եւ ներառելու են քաղաքական, դիվանագիտական, իրավական, տնտեսական, տեղեկատվական, անհրաժեշտության դեպքում՝ ռազմական եւ այլ համալիր միջոցառումներ:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների եւ նպատակների իրականացումը շարունակելու է մնալ առաջնային: Հայաստանը հետեւողականորեն իր ներդրումն է բերելու ՀԱՊԿ-ի հետագա ամրապնդման գործում:

Միաժամանակ շարունակվելու են խորանալ գործընկերային հարաբերությունները Հյուսիսատլանտյան դաշինքի հետ՝ հետապնդելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության բարձրացման, զինված ուժեր - հասարակություն համագործակցության խորացման, պաշտպանական համակարգի շարունակական բարեփոխման նպատակներ:

Անվտանգության բնագավառը ներառում է նաեւ սոցիալական պաշտպանությունը, մարդու կյանքի, սեփականության եւ այլ իրավունքների պաշտպանությունն ու երաշխավորումը, պարենային անվտանգությունը: Մենք հասնելու ենք նրան, որ մեր քաղաքացին վստահ լինի՝ վաղվա օրն այսօրվանից ապահով է լինելու: Մեր քաղաքացին, ծանր վիճակում հայտնվելով, պետք է զգա պետության աջակցությունը: Դրան հասնելու համար մենք շարունակելու ենք ներդնել աղքատության նվազեցման կայուն մեխանիզմներ, ապահովելու ենք նվազագույն աշխատավարձի շարունակական աճ եւ էապես բարեփոխելու ենք մարդկանց զբաղվածությունն ապահովող պետական քաղաքականությունը: Միաժամանակ ձգտելու ենք նրան, որ մարդը, լինելով աշխատունակ, նվազագույնս զգա պետական սոցիալական ապահովության կարիքը, քանի որ ի վիճակի է լինելու սեփական աշխատանքով ապահովել իր եւ իր ընտանիքի բարեկեցությունը:

Iovearmenia.am

Գորիս, Սբ Գրիգոր Տաթեւացու հրապարակը

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ.

«Ասելս այն է, թող ծայրահեղություն չհամարվի, որ բոլորիս համար Հայաստանը սկսվում է Սյունիքից»

▶ 1 ման տարբերակներ փնտրել: Իսկ դրա համար անհրաժեշտ է պատասխանատվություն երկրի եւ ժողովրդի հանդեպ, էներգիա, որը հնարավորություն կտա նպատակիդ հասնել՝ ի շահ ժողովրդի: Ինձ մոտ, թույլ տվեք ասել, այդ գիտակցումը, էներգիան, պատասխանատվությունը կան, ես կարող եմ, դրա համար էլ վարկանիշային ընտրացուցակով նաեւ ինձ են նպատակահարմար գտել՝ օրենսդիր մարմնում աշխատելու համար:

– Դուք Գորիսի տարածաշրջանում համբավավոր գերդաստանի զավակ եք, Գորիս քաղաքում ճանաչված երիտասարդ: Բայց նոր դեմք եք մարզի եւ ընտրատարածքի մասշտաբով: Ձեզ չճանաչողների համար մի այսպիսի հարց՝ ո՞վ է պատգամավորի թեկնածու Առուշ Առուշանյանը:

– Մարդ, ով ցանկանում է օգտակար լինել իր հայրենիքին, ով ծանոթ է երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին, ծանոթ է ընտրատարածքն ընդգրկող բնակավայրերի խնդիրներին եւ ձգտելու է անպայման դրանք ներկայացնել իշխանության վերին ատյաններում, ձգտելու է դրանց լուծման ուղիները հստակեցնել, ով պատրաստ է միշտ լինել ընտրողի հետ:

– Եվ, այդուհանդերձ, ի՞նչ եք կարծում՝ ՀՀԿ-ն ինչո՞ւ Գորիսի տարածաշրջանից հենց Ձեր թեկնածությանը նախապատվություն տվեց:

– Ճիշտ պատասխան, կարծում եմ, կտա ինքը՝ կուսակցությունը: Բայց, թվում է, դիտարկվել են մարդկային իմ հատկանիշները, կարողությունը, պատրաստակամությունը, հանրության մեջ ունեցած վարկանիշը…

– Քիչ հետո կքննարկենք Ազգային ժողովին առնչվող հարցեր, բայց կուզենայինք մինչ այդ Ձեր գործունեության երկու դրվագի վրա կանգ առնել, որոնք շատ թե քիչ պատկերացում են տալիս մարդկային Ձեր նկարագրի մասին:

Առաջին՝ այս տարվա հունվարի 6-ին՝ Սուրբ ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի օրը, Սյունյաց թեմի կողմից առաջադրվեցիք թեմի առաջնորդանիստ եկեղեցու՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 2017 թ. «Խաչի քավոր»: Ինչպե՞ս եք վերաբերվում այդ վստահությանը:

– Իհարկե պատասխանատվությամբ, եւ ձգտում եմ արդարացնել այդ վստահությունը, փորձում եմ աջակցել եկեղեցու գործունեությանը թե՛ տնտեսական, թե՛ հոգեւոր առումով: Իսկ եկեղեցին, իսկապես, հոգածության կարիք ունի. հիշենք հայոց պատմությունը, հիշենք, թե ինչպիսի դերակատարում է ունեցել եկեղեցին հայ ժողովրդի հարատեւումն ապահովելու գործում: Եվ այդ ամենից հետո դժվար չէ հասկանալ, որ յուրաքանչյուրս էլ պարտք ունենք մեր եկեղեցու հանդեպ:

– Շարունակենք նախորդ հարցը. վերջին տարիներին հասցրել եք Գորիս քաղաքի որոշ հարցերի լուծմանը մասնակից լինել. ուրիշ դեպքում այն կոչվում է բարեգործություն, բայց Դուք համաձայն չեք այդ որակմանը, քանզի միակ բարեգործը Տերն է: Ի՞նչ գործեր կթվարկեք՝ Ձեր կողմից կատարված, որոնք, մեր ընկալմամբ, այնուամենայնիվ, բարեգործություն են:

– Ճիշտն ասած ոչ բարեհարմար վիճակում եմ հայտնվում, երբ խոսք է բացվում արածներիս մասին, բայց, եթե կամենում եք, համառոտ անդրադարձ կկատարեմ:

Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շրջակայքում անց ենք կացրել գիշերային լուսավորություն, կատարել որոշ սրբատեղիների մասնակի բարեկարգում: Տաթեւի մերձակայքում գտնվող Հարանց անապատը, որքանով գիտեմ, տասնամյակներ շարունակ խմելու ջուր չի ունեցել: Եվ քանի որ այն ժամանակին կրթական կենտրոն է եղել ու պատմական մեծ արժեք ունի, զբոսաշրջիկների ուշադրությանն է արժանանում... Մի խոսքով՝ իմ ուժերով այն հիմա ապահովված է ջրով:

Նախաձեռնեցինք նախկին պիոներ դպրոցականների պալատի սպորտային դահլիճի վերանորոգումը: Մարզիչ Տիգրան Աղաբեկյանի հետ ծանոթացա «Դիանա» հյուրանոցային համալիրում: Նա երեխաներին բերել էր այդտեղ՝ մարզումների: Հարց ու փորձից իմացա, որ իրենց դահլիճը պարապմունքներ անցկացնելու համար ընդհանրապես պայմաններ չունի: Որոշեցի օգնել նրան, որպեսզի մեր քաղաքից ավելի շատ երեխաներ զբաղվեն սպորտով: Եվ հիմա մարզական դահլիճն իր դռներն է բացել սպորտասեր երեխաների առջեւ: Դրանում մեծ ներդրում ունեցավ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

– Դուք երիտասարդ գործարար եք, գուցե Ձեր գործարարությունից մեկ-երկու օրինա՞կ նշեք:

– 2010թ. հիմնել ենք «Գոր մետալ» ՍՊԸ-ն: Այն Սյունիքում առաջատար ընկերություն է, որը տարեկան 600-700 միլիոն դրամի շրջանառություն ունի, աշխատատեղեր են բացվել, այդտեղ աշխատում է 28 մարդ: Ընտանեկան բիզնեսին կից գործող «Գոր մետալը» նոր խանութներ ունի: Մինչեւ 2018թ. մեր բիզնեսն ավելի կընդլայնվի, Գորիսում կունենանք առեւտրի ու սպասարկման հզոր կենտրոն, որը ենթադրում է նոր աշխատատեղեր եւ ծառայությունների նոր որակ:

– 2015 թվականին հանրաքվեով փոփոխված Սահմանադրությամբ Հայաստանն անցում է կատարում խորհրդարանական կառավարման: Լա՞վ է դա, թե՞ վատ՝ այլ հարց է, ոչ հրատապ այս պահի համար: Բայց դրանից բխող մեկ այլ ու շատ կարեւոր հարց կա՝ նոր խորհրդարանն աննախադեպ լիազորություններ եւ պատասխանատվության մեծ բեռ է ունենալու: Հետեւաբար՝ ապագա պատգամավորի մասին մեր պատկերացումներն էլ այլ են: Դուք պատրա՞ստ եք, ընտրվելու դեպքում, արժանապատվորեն կրել ժողովրդի ընտրյալի բարձր կոչումը:

– Հանրաքվեի ժամանակ կողմ եմ քվեարկել Սահմանադրության փոփոխություններին՝ համոզված լինելով, որ դա հասունացած հարց է: Հաշվի առնելով համաշխարհային փորձը՝ խորհրդարանական կառավարումն ավելի արդյունավետ կլինի: Բնականաբար, խորհրդարանը կունենա նոր լիազորություններ, եւ պատկերացնում եմ այն բեռի ծանրությունը, որ դրվելու է պատգամավորի ուսերին: Եթե չպատկերացնեի նման ծանրությունն ու պատասխանատվությունը, մրցասպարեզ չէի մտնի:

Լիովին պատրաստ եմ դրան եւ վստահ եմ իմ ուժերին…

– Ազգային ժողովի գլխավոր գործառույթներից առաջինն օրենսդիր իշխանության իրականացումն է: Ընտրվելու դեպքում մշտական ո՞ր հանձնաժողովում եք տեսնում Ձեր գործունեությունը:

– Մասնագիտությամբ տնտեսագետ եմ, կաշխատեմ ֆինանսատնտեսական հանձնաժողովում: Այդ ոլորտն ինձ հարազատ է, ծանոթ եմ բնագավառին:

– Ընտրվելու դեպքում Դուք ներկայացնելու եք մեր հանրապետությունն ու ժողովրդին: Այսօրվա Հայաստանը որքանո՞վ է համապատասխանում Ձեր պատկերացրած Հայաստանին: Ի՞նչ հիմնախնդիրներ եք տեսնում Հայաստանում: Եվ ի՞նչ դրական միտումներ կան դրանք լուծելու ճանապարհին:

– Մեր ազգի (եւ ոչ միայն Հայաստանի Հանրապետության) թիվ 1 հիմնախնդիրն իմ կարծիքով Արցախի խնդիրն է, որի կարգավորման բանալին կա ՀՀԿ ծրագրային փաստաթղթերում: Երկրորդ խնդիրը, որ մտահոգում է ինձ, բնակչության եւ հատկապես երիտասարդության զբաղվածության խնդիրն է: Համոզված եմ, ոչ ոք չի արտագաղթի երկրից, եթե իր հայրենիքում ապրելու-աշխատելու, ինքնադրսեւորվելու հնարավորություն ունենա:

> *Կարեւորագույն խնդիր է երկրի անվտանգությունը՝ ամեն առումով, քանի որ ապրում ենք այնպիսի տարածաշրջանում եւ այնպիսի երկրների հարեւանությամբ, որ ամեն ինչի պիտի պատրաստ լինել: Առանձնապես կարեւոր է հայոց բանակի շարունակական հզորացումը, որը մեր հայրենիքի անվտանգության երաշխավորն է:*

Դրական միտումներ կան առկա խնդիրների լուծման ճանապարհին, ու այդ միտումները պետք է զարգացնել, ավելի կոնկրետացնել եւ, որ շատ կարեւոր է, հետեւել, որ դրանք իրական գործեր դառնան: Այդ միտումները հատկապես երեւում են նոր կառավարության վարքագծում, օրինակ, հարկային, մաքսային վարչարարության նվազում է նկատվում, բյուրոկրատական քաշքշուկների զսպում:

Տնտեսական մրցակցությունն էլ, կարծեք, առողջ հիմքերի վրա է դրվում, իսկ դրանից շահում են գործարարները, ինչու չէ՝ նաեւ ժողովուրդը:

– Դուք քվեարկվելու եք թիվ 12 ընտրատարածքում, որն ընդգրկում է Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերը: Հիմա կարո՞ղ ենք միասին առանձնացնել ընտրատարածքի հիմնախնդիրներից մի քանիսը, որոնք մտահոգում են Ձեզ:

– Այն մտահոգությունները, որ թվարկեցի քիչ առաջ՝ հանրապետության կտրվածքով, վերաբերում են նաեւ մեր մարզին ու ընտրատարածքին: Սակայն Սյունիքն ունի առանձնահատկություններ. մարզն ամենառազմավարական տարածաշրջանն է հանրապետությունում, եւ նրա հզորացումն ու ամրապնդումը՝ բոլոր տեսանկյուններից, օրախնդիր հնչեղություն ունեն: Եթե ամուր է, հզոր է Սյունիքը, ապա բոլոր առումներով հզոր է Հայաստանը: Շատ կարեւոր եմ համարում լեռնային գյուղերի ամրապնդումը: Առանց կենսունակ գյուղերի հնարավոր չէ պատկերացնել Սյունիքը, իհարկե, նաեւ հայոց աշխարհն ամբողջովին: Ասելս այն է, թող ծայրահեղություն չհամարվի, որ բոլորիս համար Հայաստանը սկսվում է Սյունիքից:

– Կուզենայինք անպայման լսել Գորիս քաղաքի, Գորիսի տարածաշրջանի իրավիճակի մասին Ձեր բնութագրումները:

– Մենք երջանիկ մարդիկ ենք, որ ծնվել եւ ապրում ենք Գորիսում: Սակայն, ինչպես բոլոր քաղաքները, Գորիսն էլ խնդիրներ ունի: Կառավարության որոշումներով Գորիսը պետք է դառնա զբոսաշրջության կենտրոն: Ցավոք, այդ գործընթացը շատ դանդաղ է ընթանում: Թե երբ այդ որոշումները կյանքի կկոչվեն, չի ▶ 6

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ

Առուշ Առուշանյան. երիտասարդ, ում կարելի է վստահել ոչ դյուրին մեր ժամանակներում անգամ

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Իրականության զգացում ունենալն անհրաժեշտ է յուրաքանչյուրին՝ առանց տարիքի ու սեռի սահմանափակման: Դա այն հենքն է, որի վրա կառուցվում է յուրաքանչյուր անհատի կենսագրությունը եւ դա նաեւ այն տարրն է, որ դառնում է ամեն մի կերպարի զորեղ բնութագրիչը:

– Եթե մարդ կորցնում է իրականության զգացումը, նա անիմաստ լողում է երազանքների ծովում, եւ նրա խորտակումը ցավալի հետեւանքներ կունենա: Սա ինչու իրականությունը պետք է ընդունել այնպես, ինչպես կա: Իսկ դա նշանակում է նաեւ ժամանակի հետ դաշն ապրել, ժամանակի հետ համաքայլ ընթանալ եւ միշտ պատրաստ լինել ժամանակի ոլորապտույտներում անվտանգ «երթեւեկելուն»: Անհամեստություն չլինի ասել, որ ես ունեմ իրականության զգացում, եւ այն բավարար է մեր ընտանեկան բիզնեսը զարգացնելու, բիզնեսը խթանելու համար գտնել ոչ ստանդարտ լուծումներ: Նաեւ՝ ուրիշի ցավն ու ուրախությունն ապրելու եւ կիսելու համար, ժամանակի արժեհամակարգերը գնահատելու եւ դրանք դարձնել ապրելու կերպ ու ապրելու բովանդակություն, պատասխանատու լինելու նաեւ գալիք սերունդների, սեփական երկրի համար:

Եվ Առուշ Առուշանյանին ոչ մեկը չի հուշել, ոչ մեկը չի դրդել, որ ճարտարապետի հետ խորհրդակցելով՝ բարեկարգ տեսքի բերի Լաստի խութի ստորոտում գտնվող հնամենի սրբավայրը: Հոգու մղումով է արել, որ մարդիկ աղոթատեղի ունենան, որ հինավուրց այդ աղոթատեղին չկորչի ժամանակի ընթացքում. չէ՞ որ այն մեր նախնիների պատմությունն է նաեւ: Իսկ այդ պատմությունը ներկա սերունդը պարտավոր է պահպանել ու հանձնել իրենից հետո եկողներին:

– Տաթեւի վանական համալիրն ամեն տարի դեպի իրեն է ձգում հարյուրավոր զբոսաշրջիկների՝ աշխարհի տարբեր անկյուններից: Նրանք ցանկանում են նաեւ հմայվել վանքի մերձակայքում գտնվող Հարանց անապատով: Բիբլիական հրաշք անկյունը գնալ բոլորին չի հաջողվում, քանի որ Սատանայի կամրջից ձգվող կածան-ճանապարհը դժվարանցանելի է եւ ոչ բոլորի համար հաղթահարելի: Մտածում ենք այդ մասին, գուցե մի օր մեզ հաջողվի լուծել այդ հարցը: Իսկ խմելու ջրի հարցն արդեն լուծել ենք, եւ զբոսաշրջիկը ծարավը հագեցնելու համար խնդիր չի ունենա: Ասում ենք՝ Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ: Դա աքսիոմա է: Այդպես միայն ասել ու հպարտանալ, քիչ է: Պետք է գործենք եւ այն էլ այնպես, որ զբոսաշրջիկը երկար մնա մեզ մոտ՝ մեր սպասարկման, մեր վերաբերմունքի շնորհիվ նաեւ: Այնինչ, կան որոշ վայ սպասարկողներ, ովքեր, տեսնելով զբոսաշրջիկի, մտածում են նրանից ավելի շատ գումար վերցնելու մասին: Դա անբարոյականություն է եւ խփում է մեր ազգի նկարագրին: Այդ նույն զբոսաշրջիկը, գնալով իր երկիրը, պատմում է մեր սպասարկման կուլտուրայի, բարձր գների մասին, եւ Հայաստանը զբոսաշրջիկի համար դառնում է թանկ երկիր: Եվ ինչ արեցինք մենք. մենք դրանով խփեցինք շատ-շատերիս բյուջեին՝ վանելով զբոսաշրջիկին մեր երկրից, մեր քաղաքից, փոխանակ սպասարկումը որակյալ ու մատչելի դարձնելու, որն անշուշտ կխթանի զբոսաշրջությունը, եւ շատերիս բյուջեն կմեծանա:

2014 թվականին Գորիսի բնակելի տներից մեկը հրդեհվեց: Տնից ոչինչ հնարավոր չեղավ փրկել: Իսկ այդ օջախում շուտով երեխա պիտի ծնվեր: Առուշը, իմանալով այդ մասին, օգնության հասավ… Բայց դա եզակի օրինակ չէ, եղել են այլ պատահարներ եւս, որոնց արդյունքում ծանր իրավիճակում են հայտնվել ընտանիքներ, եւ նրանց օգնության ձեռք է մեկնել Առուշ Առուշանյանը:

– Ես բարեգործ չեմ, – ասում է Առուշը, – բարեգործն Աստված է: – *Ես ուղղակի օգտվել եմ Բարձրյալի տված հնարավորությունից եւ օգնել նեղն ընկած ընտանիքին: Առհասարակ, մարդն այնպես պետք է ապրի, որ Տիրոջ պարգեւած յուրաքանչյուր օրը մտածի մի լավ գործ կատարելու մասին եւ փառք տա Աստծուն, որ իրեն այդպիսի հնարավորություն է տվել այդ լավ գործը կատարելու համար: Այս աշխարհում բոլորս հյուր ենք ու պիտի հասկանանք, որ մարդու համար կարեւորն անունն է: Միայն մարդու արած գործն ու անունն են մնում, որը նրա սերնդին առանց ամաչելու ապրելու իրավունք է տալիս: Եվ հնարավորություն ունեցող յուրաքանչյուր ոք իրեն պարտավորված պիտի զգա, իրեն հաշվետու պիտի զգա հասարակության առջեւ, չէ՞ որ նրանց շնորհիվ է այդ հնարավորությունը ծեռք բերել, ու երբեք չպիտի սպասի, որ իրեն դիմեն, ինքը պետք է ծեռք մեկնի, ընդառաջ գնա օգնություն սպասողին:*

Առուշը մարդ արարածի նկարագրի մասին իր պատկերացումն ունի. մարդու մեջ գնահատում է կամեցողությունը, խոսքի տեր ու կայուն լինելը: Ատում է նախանձը, վախկոտությունը, չկամեցողությունը, կեղծավորությունը:

– Կեղծավոր մարդը դերասան է: Հա, գիտենք, աշխարհը բեմ է, մենք էլ՝ դերասան: Ուղղակի ցավալին այն է, որ նման մարկանց մոտ դերասանությունը չափ ու սահման չունի: Նրանք տեղ այնպես, ինչպես կա: Իսկ դա նշանակում է նաեւ ժամանակի հետ դաշն ապրել, ժամանակի հետ համաքայլ ընթանալ եւ միշտ պատրաստ լինել ժամանակի ոլորապտույտներում անվտանգ «երթեւեկելուն»: Անհամեստություն չլինի ասել, որ ես ունեմ իրականության զգացում, եւ այն բավարար է մեր ընտանեկան բիզնեսը զարգացնելու, բիզնեսը խթանելու համար գտնել ոչ ստանդարտ լուծումներ: Նաեւ՝ ուրիշի ցավն ու ուրախությունն ապրելու եւ կիսելու համար, ժամանակի արժեհամակարգերը գնահատելու եւ դրանք դարձնել ապրելու կերպ ու ապրելու բովանդակություն, պատասխանատու լինելու նաեւ գալիք սերունդների, սեփական երկրի համար:

14 փետրվարի 2017թ., Տեառնընդառաջը Գորիսում, որի կազմակերպմանն ակտիվ մասնակցություն ունեցավ Առուշ Առուշանյանը:

15 փետրվարի 2017թ., վերաբացվեց Գորիսի ըմբշամարտի մարզադահլիճը՝ հիմնանորոգումից հետո:

Ամ ցանկանում մեր թեկնածու Առուշ Առուշանյանն է

ՀԱՅԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

«Գոր մետալ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ

Աշխատելը, աշխատանք ունենալը միշտ էլ կենսական անհրաժեշտություն է եղել: Այն առավել քան կարեւոր ու հրատապ է մեր օրերում: Առուշ Առուշանյանի շնորհիվ ես եւ ինձ նման քսանյոթ հոգի լավ վարձատրվող աշխատանք ունենք: 2010 թվականից աշխատում եմ «Գոր մետալ» ՍՊԸ-ում, այդ ընկերության գլխավոր հաշվապահն եմ:

Մինչ այդ էլ ծանոթ էի, բայց համատեղ աշխատանքային գործունեության ընթացքում միայն, ինչպես ասում են, նրան ճանաչեցի համակողմանիորեն:

Ասում են, թե «լավ մարդ» հասկացությունը մտացածին է, այդպիսի կատեգորիա գոյություն չունի: Ես այդ կարծիքը չեմ բաժանում: Ավելին ասեմ, ինձ համար հենց նա է այդպիսի բնորոշման չափանիշը: Որպես ղեկավար նա պարտավոր է պահանջկոտ լինել, բայց դրա հետ մեկտեղ նաեւ պարտաճանաչ է, չափազանց աշխատասեր, կազմակերպական ունակություններով օժտված, բանիմաց:

Ընկերության հիմնադիր սեփականատերն է: Թվում է, թե արդարության, աշխատանքի հետ կապված հարցերը կարող է լուծել միանձնյա, առանց ենթակաների կարծիքը հարցնելու՝ «Բակլան իմն է՝ խաշած եմ ցանում»: Բայց չէ, այդպես չէ: Որեւէ հարց լուծելուց առաջ, եթե այդ հարցը նույնիսկ մեծ կարեւորություն չունի, նա անպայման այդ առթիվ խորհրդակցում է ենթակաների հետ եւ միայն դրանից հետո որոշում կայացնում: Վկան եմ այն բանի, որ մեզ հետ նման զրույցներից հետո շատ հաճախ է փոխել իր որոշում, ինչը ստիպում է մեզ ավելի

չունեն գեղեցիկ հասարակությունում, բայց մինչ նրանց դերասանությունը ջրի երես դուրս գա, կարող է բանը բանից անցնել՝ ի վնաս շատերի: Իսկ վախկոտ մարդը միշտ էլ սխալ որոշումներ է կայացնում՝ ի վնաս շատերի: Եվ հետո էլ նման մարդիկ բողոքում են իրենց բախտից: Նախանձը ներսից կուտի մարդուն, եւ նա մի օր կհայտնվի անմարդաբնակ մի կղզում: Եղեք կամեցող եւ Աստված անպայման մի օր հատուցելու է ձեզ...

Առուշի համար ընկերությունը մեծ արժեք է: Այն նրա հենման կետերից է: Նրա ընկերական շրջապատը ներառում է տարբեր տարիքի ու խավի մարդկանց:

– Մեր ընկերությունում գործում է թիմով աշխատելու սկզբունքը: Յուրաքանչյուր գործ կատարելիս թիմով հավաքվում ենք, քննարկում բոլոր տեսակետները եւ ամենառացիոնալ տարբերակն ընտրում: Մեզնից յուրաքանչյուրը խոսում է մենքով: Երբեք ոչ մեկը չի ասում՝ ես արեցի, ես նախաձեռնեցի: Այլ՝ մենք արեցինք, մենք ստեղծեցինք, մենք օգնեցինք...

Առուշ Առուշանյանը ծնվել է Գորիսում: Մանկությունն անցել է Գորիսի հանրահայտ Չոփչունց ձորում, որը մի ուրույն բիբլիական աշխարհ է՝ իր մաքուր, ազնիվ մարդկանցով: Իսկ Գետափնյա թաղամասում Չոփչունց ձորի ֆուտբոլի թիմի մրցումները մյուս թիմերի հետ բոլորի համար դառնում էին յուրահատուկ տոն, որ Առուշը մինչեւ հիմա էլ երանությամբ է հիշում:

– Մենք թրծվեցինք այդ խաղերում, արժեւորեցինք ընկերությունը, հասկացանք, որ թիմը հզոր է, թիմով գործելու դեպքում մեն-մենակ չես հայտնվի բաց ծովում՝ ալիքների դեմ հանդիման: Եվ մեր ընկերությունն ամեն օր քննություն է տալիս ու ամեն օր պատվով դուրս գալիս քննությունից:

– Առուշ, դու երիտասարդության ներկայացուցիչ ես, ի՞նչ կարծիք ունես մեր երիտասարդության մասին:

– Մենք մեր ծնողների զավակն ենք: Մեր ծնողները մեզ ծնել-սնելուց բացի, մեզ մեր հայրենիքում ապրելու հնարավորություն են տվել: Հայրենիքն ամենամեծ արժեքն է, ամենասուրբ ու մնայուն արժեքը: Ապրելով քո հայրենիքում, դու քեզ քո հայրենիքի տերն ես զգում, հողը ոտքիդ տակ չի երերում, իսկ ապրելով ուրիշ տեղում՝ դու քեզ զգում ես ինչպես ձուկն առանց ջրի: Եվ հանուն հայրենիքի 2016թ. ապրիլին հայ երիտասարդներն ի մի եկան, կանխեցին ադրբեջանցի հրոսակների առաջխաղացումը: Ահա այդպիսի ոսկի երիտասարդություն ունենք: Մեր ժամանակների ոսկի երիտասարդությունն Ալ. Շիրվանզադեի «Քառս» վեպի ոսկի երիտասարդության հետ համեմատության եզրեր չունի: Այսօրվա երիտասարդը մեծ հայրենասեր է:

– Իսկ դու ի՞նչ ես արել ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ:

– Ես ու իմ ընկերները, այսինքն՝ մեր թիմը, անմիջապես կամավորական ջոկատ կազմեցինք եւ գնացինք զորամաս՝ զենք ստանալու: Զորամասից ասացին՝ կազմ ու պատրաստ եղեք, ձեր անհրաժեշտությունը հենց զգացվեց, անմիջապես կզանգահարենք: Իսկ իմ ընտանիքը հայոց բանակին շուրջ 20 միլիոն դրամ է փոխանցել: Բացի դրանից, բանակին նվիրեցինք երկու մեքենա:

– Շա՞տ եք սիրում Գորիսը:

– Գորիսն իմ կյանքն է, իմ սերը: Ես Գորիսի հետ ամուր թելերով եմ կապված: Ես հնարավորություն ունեմ այլ քաղաքներում ապրելու, չեմ գնա, իմը Գորիսն է, այստեղ ես լիաթոք եմ շնչում: Գորիսն էլ խնդիրներ ունի, անհրաժեշտ է դրանց լուծումներ տալ, իրական մոտեցումներ ցուցաբերել այդ խնդիրների լուծման համար, հարկավոր է հասկանալ, թե այդ խնդիրներն ինչի արդյունք են, այսինքն՝ իմանալ դրանց իրական պատճառը, պատճառը վերացնել, թե չէ՝ որոշ ժամանակ անց այդ խնդիրը դարձյալ գլուխ է բարձրացնելու: Գործենք ոչ թե այն բժշկի նման, որ հիվանդին ցավազրկող է նշանակում, այլ այն բժշկի նման, որ հիվանդության բուն պատճառն է վերացնում: Այդ դեպքում մեր հասարակությանը հուզող խնդիրներն աստիճանաբար կվերանան, եւ հասարակությունը կապրի արժանապատիվ կյանքով:

– Ո՞րն է քո հոբին:

– Սպորտն է: Սպորտի շնորհիվ է, որ դու ուժեղ ես լինում ե՛ւ ֆիզիկապես, ե՛ւ մտոք:

– Ե՞րբ ես քեզ ուժեղ զգում:

– Անկեղծ լինեմ՝ ոչ մի պարագայում ես ինձ թույլ չեմ զգում, բայց առավել հզոր եմ ինձ զգում եկեղեցում: Եկեղեցի գնալն ինձ համար հոգեւոր պահանջ է: Այդտեղ ես լիցքաթափվում եմ, միտքս պարզվում է, հավատքս ինձ նոր ուժ է տալիս: Ես հավատացյալ մարդ եմ: Ես պաշտում եմ Աստծուն, ես հայ քրիստոնյա եմ հոգով, սրտով, գործերով: Ես տանել չեմ կարող այն մարդկանց, ովքեր մեքենայում խաչ են կախում՝ իբր հավատացյալ են, բայց հակաքրիստոնեական արարքներ են թույլ տալիս, ասելս այն է, որ ձեւականություններին վերջ տանք եւ ապրենք այնպես, գործենք այնպես, որ ոչ մեկին չվնասենք, որ ապրելը բոլորի համար լինի գեղեցիկ: Դա հատկապես վերաբերում է երիտասարդներիս, որովհետեւ մենք ենք հասարակության շարժիչ ուժը: Եվ որպես շարժիչ ուժ, մենք պատասխանատու ենք մեր ընտանիքի, մեր հայրենիքի ներկայի, ապագայի համար: Եվ ես ուզում եմ բոլորին ասել՝ վստահեք մեզ, հավատացեք մեզ, մենք գալիս ենք ոչ միայն տեր կանգնելու մեր արժեքներին, ավանդույթներին, մեր հողուջրին, նվաճումներին, հոգսերին, այլեւ նոր էջ գրելու...

■

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Գորիս Գամմա» ԲԲԸ գլխավոր տնօրեն

Սկզբնական շրջանում Առուշի հետ ունեի զուտ գործնական հարաբերություն, բայց հետագայում, չնայած մեր տարիքային տարբերությանը, այդ հարաբերությունները դարձան մտերմիկ, ընկերական: Առուշի օգնությամբ ճանաչեցի նաեւ նրա ստեղծարար ընտանիքի ավագ անդամներին՝ հայր Գագիկ Առուշանյանին եւ բոլոր յոթ գործարար հորեղբայրներին: Համաձայնեք, որ եզակի ընտանիք է, ուղղակի երեւույթ:

Գործարար Առուշի տեսակն ինձ համար ընդունելի է, շատ-շատ: Լինելով զգալի նյութական միջոցների տեր ու տնօրինող՝ նա երբեք չի տառապել նյութապաշտություն հիվանդությամբ եւ միշտ առաջնորդվել է գաղափարով, բարի նպատակներով: Շատ եմ գնահատում նրա համառությունն ու նպատակասլացությունը: Սրանք մարդկային մեծ արժեքներ են: Ասածներս չեն բխում նախընտրական քարոզարշավի թելադրած տրամաբանությունից: Որպես անհատ, որպես գործարար՝ իր մեջ միշտ էլ կրել է դրանք: Նրա հետ եմ կապում նաեւ իմ քաղաքի, երկրամասի վաղվա օրը, նրա գործելակերպը սրտամոտ է ինձ:

Երբ թեկնածությունս էի դրել Գորիսի քաղաքապետի պաշտոնում ընտրվելու համար, մենք գործում էինք միասին, այն ժամանակ էլ տեսնում էի մեր նպատակների ընդհանրությունը:

Հայտնի միտք կա՝ եթե սիրում ես մեկին, լինի դա անհատ, քո քաղաքը, թե երկիրը, նշանակում է՝ պատասխանատու ես նրա համար: Առուշը սիրահարված է իր հողին, ջրին, ժողովրդին, ասել է թե՝ սոցիալական ու բարոյական պատասխանատվություն է կրում նրանց համար: Ես նրա մեջ տեսնում եմ ակնարկածս սոցիալական բարձր պատասխանատվությունը: Դրան կենսական նոր շունչ տվեց մեր երկրի նոր վարչապետի նշանակումը: Այս մասին ես կիսվել եմ նաեւ Առուշի հետ: Այստեղ մեր մոտեցումները համընկնում են: Այս փաստը վստահություն է ներշնչել նաեւ Առուշին եւ նրա նման շատ ու շատ գործարար անհատների: ■

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ագարակ քաղաքի բնակիչ, գործարար

Առուշանյանների ընտանիքին 1993 թվականից եմ ճանաչում: Գործի բերումով շփվել եմ Գագիկ Առուշանյանի հետ, բիզնեսով ենք զբաղվել: Շատ բարեխիղճ գործարար է, բոլորին հասնող, նեցուկ եղող: Անցած տարիների ընթացքում շատ մարդկանց է օգնության ձեռք մեկնել, ավելին՝ աշխատատեղեր է բացել, մարդկանց համար ապրուստի միջոց ստեղծել: Հետո աստիճանաբար սկսեցի ճանաչել նրա որդուն՝ Առուշ Առուշանյանին: Պիտի ժողովրդական խոսքով բնորոշեմ նրան՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում: Շատ խելացի երիտասարդ է՝ իր տարիքի համեմատ զարգացած, մարդկային բարեմասնություններով օժտված: Տեսել եմ, որ շրջապատված է բարեկիրթ, գիտակից երիտասարդներով: Բացի այդ՝ շփվելով նրա հետ, զգացել եմ, թե որքան լավ գիտի Սյունիքը, տեղյակ է նրա հիմնախնդիրներին: Փոքր-ինչ չեմ կասկածում, որ հոր նման նրա մեջ եւս արմատներ է ձգել կողքիններին օգտակար լինելու ձգտումը: Նրա հետ հաղորդակցվելիս հաճույք ես ստանում:

Իմացա, որ պատգամավորության թեկնածու է առաջադրվել Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում, ողջունում եմ, որ ցանկություն է հայտնել մտնել օրինաստեղծ դաշտ: Անկեղծ ասած՝ երբեւէ քաղաքականությամբ չեմ զբաղվել, գործարար մարդ եմ: Բայց, ինչպես ասում են՝ անզեն աչքով էլ նկատելի է, որ մեր խորհրդարանին նման պատրաստակամ մարդիկ են անհրաժեշտ: Ընտրվելու դեպքում դույզն-ինչ տարակույս չունեմ, որ նա նախեւառաջ հետամուտ կլինի Սյունիքի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը, կպաշտպանի մանր ու միջին բիզնեսով զբաղվողների շահերը: Որպեսզի մեր երկիրը ոտքի կանգնի, մեզ «աշխատող» օրենքներ են անհրաժեշտ:

Բոլոր սյունեցիներին, թիվ 12 ընտրատարածքի ընտրողներին կոչ եմ անում ընտրության օրը քվեարկել Առուշան Առուշանյանի օգտին: ■

Սիր ոսկեմատակարի մեր թեկնածուին Առուշ Առուշանյանին

նվիրված աշխատել:

Կարեւորում է աշխատանքը երիտասարդների հետ՝ նրանց ինքնուրույն գործելու, նաեւ ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություններ տալով:

Բարձր ինտելեկտի տեր է, որպես ղեկավար նաեւ՝ արդարամիտ:

Առիթներ են լինում աշխատանքից դուրս նրա հետ շփվելու նաեւ այլ հարթակներում, հենց այդ ժամանակ էլ, որպես անհատի, ծանոթանում ենք նրա մարդկային այլ որակների հետ: Չի եղել մի դեպք, որ նա անմիջական մասնակցություն չունենա իր ղեկավարած փոքրիկ կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի նույնիսկ ընտանեկան փոքր ուրախություններին, տոներին: Տեղին է ասել, որ դժվարությունների պահին էլ զգում ենք նրա ներկայությունը, աջակցությունը:

Առուշը չափազանց մեծ էներգիայի, նաեւ մտավոր ունակությունների տեր անհատ է: Հասկանալի է, որ բարձրագույն կրթությամբ երիտասարդը հենց այդպիսին էլ պետք է լինի: Բայց այս բնորոշման մեջ հավանաբար պակաս դերակատարում չունի նաեւ նրա գենետիկ ծագումը: Գորիսեցիները շատ լավ են ճանաչում Առուշանյանների տոհմին: Առուշանը յոթ հորեղբայր ունի, որոնք բոլորն էլ գործարար մարդիկ են եւ թեւ ու թիկունք են ոչ միայն իրար, այլ նաեւ իրենց հետ ազգակցական ոչ մի կապ չունեցող շատ շատերի:

Տեղին կլինի, որ հնարավորություն տրվի նրան՝ ունեցած դրական որակներն ի նպաստ դնելու նաեւ մեր պետության զարգացմանն ու բարգավաճմանը: ■

ՏԵՐ ԱՀԱՐՈՆ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Գորիսի տարածաշրջանի հոգեւոր հայր

Իմ հավատացյալ հոտի խաչի քավորը 2017թ. Առուշ Առուշանյանն է: Այս հակիրճ նախադասությունը երիտասարդ մարդու ամբողջական բնութագիրն է: Պատահական մարդը նման պատվի չի արժանանում:

Անկախացումից հետո օր օրի եկեղեցի հաճախողների թիվն ավելանում է: Դա լավ է: Ինձ, որպես եկեղեցու սպասավորի, հստակ տեսանելի է, որ նրանց մի զգալի մասը եկեղեցի է մտնում ոչ թե որպես հավատացյալ, այլ մտնում է ուղղակի մոմ վառելու համար: Սկզբնական շրջանում հավանաբար Առուշն էլ նրանց մեջ էր: Հայտնի բան է, որ հիվանդ մարդը եթե չգիտի իր հիվանդության մասին, երբեք բժշկի չի դիմում: Դիմում է միայն այդ մասին իմանալուց հետո: Հավատի թերահավատությունն էլ հիվանդություն է, եւ այն էլ՝ ծանր հիվանդություն: Սկզբնական շրջանում երեւի Առուշն էլ նրանց մեջ էր, բայց նա հաղթահարեց այդ տկարությունը, որովհետեւ ի սկզբանե նրա մեջ առկա էր հավատի մարդու ունդը, որը պարարտ հողի, ջրի ու լույսի առկայության պայմաններում պետք է ծլարձակեր: Եվ դա եղավ: Հիմա նա եկեղեցի է մտնում ոչ թե մոմ վառելու, այլ աղոթելու: Այդ բանն առավել ակնհայտ դարձավ սուրբ հող՝ Երուսաղեմ նրա այցելությունից հետո: Ուխտագնացությունից վերադառնալուց ի վեր մեր հանդիպումներն ավելի հաճախակի են դարձել: Նման հանդիպումների ընթացքում քիչ չեն դեպքերը, երբ մեր զրույցները դուրս են գալիս հավատի հետ աղերս ունեցող հարցերի շրջանակներից, առնչվում առօրյա, աշխարհիկ հոգսերի եւս: Այդ ժամանակ էլ ակնհայտ են դառնում ապագային միտված նրա լավ ցանկությունները, բարի նպատակները:

Մեր ժողովրդի կողմից քրիստոնեության ընդունումից ի վեր դարեր շարունակ օտար դավանանքները, նույնիսկ քրիստոնեական հավատքի այլ ուղղություններ փորձեր են արել մեր հավատացյալ ժողովրդին շեղելու ճշմարիտ հավատքից: Այսօր էլ ոտնձգությունները մեր հավատքի նկատմամբ չեն նվազել, որոնք իրականացվում են տասնյակ ու տասնյակ աղանդների միջոցով, բայց մեր հավատքը անսասան է, որովհետեւ այն ճշմարիտ է:

Առուշի եւ նրա նման ճշմարիտ քրիստոնյաների այցելությունը եկեղեցի հոգու պարտք է, որը նրանց հանգստություն, վաղվա օրվա նկատմամբ վստահություն է ներշնչում: Հավատքի մարդու համար անհաղթահարելի դժվարություններ չկան, որովհետեւ նա գիտի, համոզված է, որ Աստված ամենուր իր հետ է, նա ուժեղ է, աներեր, անվարան: Եթե մարդը որոշել է լավ բան անել, աստվածահաճո բան անել, ապա մեզանից յուրաքանչյուրը, այդ թվում նաեւ ես, որպես հոտի հոգեւոր հայր, պետք է օրհնեմ, համակողմանի օգնություն եւ աջակցություն ցույց տամ նրան իր բարի նպատակներն իրականացնելու համար: Ծանոթ եմ ապագային միտված նրա այդպիսի բազում նպատակներին ու ծրագրերին: ■

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ • 10 ՄԱՐՏԻ 2017Թ • № 09 (427)

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ.

«Ասելս այն է, թող ծայրահեղություն չհամարվի, որ բոլորիս համար Հայաստանը սկսվում է Սյունիքից»

▶ 3 երեւում:

Մեր տարածաշրջանը բացառիկ պատմամշակութային արժեքներ ունի, սակայն դրանք հասու չեն զբոսաշրջիկին:

Դրա համար էլ անհրաժեշտ է հանրային ենթակառուցվածքները զարգացնել, հանրային տարածքներն ակնահաճո տեսքի բերել, լավ ճանապարհներ ունենալ, մի խոսքով՝ զբոսաշրջությունը զարգացնելու համար պետք է դրան նպաստող ենթակառուցվածքներն արդիականացնել, իսկ արդիականացումն այնպես պետք է արվի, որ պատմական արժեքներն իրենց դիմագիծը չկորցնեն:

– Քիչ առաջ նշեցինք, որ Դուք խորհրդարան եք գնում գործարար աշխարհից: Ինչպե՞ս եք գնահատում մանր ու միջին ձեռնարկատերերի վիճակը, ի՞նչն է խոչընդոտում ձեռնարկատիրության զարգացմանը՝ մանր ու միջինը նկատի ունենք:

– Ինչպես ամեն բնագավառում, այդտեղ էլ խնդիրներ կան: Սակայն նկատում եմ, որ դրանք արդեն անլուծելի չեն եւ բավականին դրական արձանագրումներ կան: Մենաշնորհները կամաց-կամաց վերանում են, առողջ տնտեսական մրցակցության կենսունակ ծիլերը երեւում են, հեշտացել է անհատ ձեռներեցների եւ տնտեսվարող այլ սուբյեկտների գրանցման կարգը, անհատ ձեռներեցների հանդեպ հարկային քաղաքականությունը մեղմացվում է: Վերջերս հարկերից ազատվեցին մի շարք մանր տնտեսվարողներ: Բայց եւ այնպես, հարկային դաշտն իմ կարծիքով դեռ փոփոխությունների կարիք ունի: Իսկ դրանով հանրապետությունում բավականին լուրջ տեղաշարժեր կգրանցվեն. արտադրությունը տեղից կշարժվի: Դա նշանակում է նաեւ՝ բյուջեն կլցվի լրացուցիչ հոսքերով, կբացվեն նոր աշխատատեղեր:

– Ըստ նոր Ընտրական օրենսգրքի՝ պատգամավորի թեկնածուն այլեւս նախընտրական իր սեփական ծրագիրը չի ունենա: Այն ներկայացնելու է կուսակցությունը կամ կուսակցության դաշինքը: Այսինքն՝ ՀՀԿ ներկայացրած նախընտրական ծրագիրը նաեւ Ձեր ծրագիրն է, որն, ընտրվելու դեպքում, Դուք պետք է իրականացնեք առաջիկա հինգ տարում: Ծանո՞թ եք այդ ծրագրին, որքանո՞վ է այն իրատեսական եւ մրցունակ:

– Ծրագրին ծանոթացել եմ, միանշանակ կարող եմ ասել՝ բոլոր կուսակցությունների ու դաշինքների ծրագրերի համեմատ, ՀՀԿ ծրագիրն ամենաիրատեսականն է, մրցունակը: Դա չի նշանակում, իհարկե, որ մյուսների մոտ ռացիոնալ հատիկ չկա: Կա: Ահա ինչու, ընտրությունից հետո, իմ կարծիքով, մյուսներից պետք է վերցնել այդ ռացիոնալը եւ ՀՀԿ անելիքներն ավելի հստակեցնել ու հարստացնել՝ ի շահ մեր հասարակության զարգացման:

– Առաջիկայում մեզ սպասվում են աննախադեպ ընտրություններ, աննախադեպ՝ մի քանի առումով: Նկատի ունենք մրցակիցների մեծ թիվը թե՛ կուսակցության ներսում, թե՛ այլ կուսակցություններում, դաշինքներում: Գորիս քաղաքից պատգամավորի թեկնածու է առաջադրվել տասը մարդ: Նրանք ե՛ւ ՀՀԿ-ից են, ե՛ւ այլ կուսակցություններից, դաշինքներից: Ո՞ւմ եք համարում Ձեր մրցակիցը Գորիսի տարածաշրջանում:

Ո՞ր քաղաքական ուժն եք համարում ՀՀԿ գլխավոր մրցակիցը Գորիսում եւ առհասարակ ընտրատարածքում:

– ՀՀԿ ցուցակում ընդգրկվածներին ինձ մրցակից չեմ համարում: Նրանց հաղթանակը նաեւ իմ հաղթանակն է: Ես մրցակից համարում եմ այլ կուսակցություններից եւ կուսակցությունների դաշինքից առաջադրվածներին: Այդուհանդերձ՝ հարգում եմ իմ բոլոր մրցակիցներին, հարգում եմ նրանց ձգտումը՝ դառնալու պատգամավոր: Թե ով կհաղթի ապրիլի 2-ին, պատասխանը կտա ընտրողը:

Թող վերամբարձ չհնչի, իմ կարծիքով, հանրության բոլոր խավերի համար ցանկալի թեկնածու եմ: Այդպես արտահայտվելու հիմքեր ունեմ. այս օրերին տարբեր տարիքի ու մասնագիտության տեր մարդիկ իրենց աջակցությունն են հայտնում ինձ: Նրանք ուսանողներ են, ուսուցիչներ, բժիշկներ, տնտեսագետներ, առեւտրի ոլորտի աշխատողներ, քաղծառայողներ, գյուղաբնակներ...

– Լավ է, որ բոլորից ակնկալիք ունեք, իսկ վարչական ռեսուրսից Ձեզ բաժին կհասնի՞:

– Վարչական ռեսուրս հասկացությունն ինձ համար անընդունելի է: Ես բոլորին ընդունում եմ որպես ընտրող: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի ինձ համար ընտրող է: Եվ ակնկալիք ունեմ ընտրատարածքի բոլոր ընտրողներից:

– Հետաքրքիր է իմանալ նախընտրական քարոզչության Ձեր մարտավարության մասին: Ի՞նչ սկզբունքներ եք որդեգրել, միայն Գորիս քաղաքում եւ մերձակա գյուղերո՞ւմ եք աշխատելու ընտրողի հետ, թե՞ նաեւ ընտրատարածքի մյուս բնակավայրերում:

– Նախընտրական քարոզչական աշխատանքը ծավալելու եմ թիվ 12 ընտրատարածքի բոլոր բնակավայրերում: Հանդիպելու եմ բոլոր ընտրողների հետ, նրանց հետ երկխոսության մեջ եմ մտնելու: Ես պիտի զգամ իմ ընտրողի շունչը, իրենք էլ ինձ պիտի ավելի լավ ճանաչեն:

– Որքանով տեղյակ ենք, Դուք վերջերս դարձել եք նաեւ ՀՀԿ Գորիսի շրջանային կառույցի պատասխանատուներից մեկը: Ըստ շրջանառվող խոսակցությունների՝ կարճ ժամանակամիջոցում, Ձեր հանդեպ վստահություն տածելով, հարյուրավոր գորիսեցիներ ՀՀԿ շարքերն ընդունվելու ցանկություն են հայտնել:

– Իսկապես, վերջին երկու ամսում բավականին աշխուժություն է տիրում մեր տեղական կառույցում: Մարդիկ գալիս են: Ես չեմ ուզում ասել, որ դա գործունեությանս արդյունքն է: Իմ կարծիքով, հավատ կա ՀՀԿ հանդեպ, գաղափարական մղումով են մարդիկ անդամակցում մեր կուսակցությանը, մարդիկ, որ թացը չորից լավ են ջոկում, եւ կուսակցությունների առատության մեջ իրենք գտել են իրենց կուսակցությունն ու պատրաստ են ՀՀԿ-ի հետ, ՀՀԿ-ի համար աշխատել:

– Ձեր հայրը՝ Գագիկ Առուշանյանը, հանրապետության գործարար աշխարհում ճանաչված անձնավորություն է: Ի՞նչ եք կարծում, ապրիլի 2-ին Ձեր օգտին քվեարկողները Ձեզ կդիտեն որպես Գագիկ Առուշանյանի որդի՞, թե՞ նոր եւ ինքնուրույն դիմագծով հանդես եկող երիտասարդ:

– Ուրախ կլինեմ, եթե որոշ ընտրողներ ինձ ձայն տան որպես Գագիկ Առուշանյանի որդի: Բայց եւ համոզված եմ, որ իմ ծրագրերին, իմ աշխարհայացքին ծանոթանալով՝ նրանք ինձ ձայն կտան որպես Առուշ Առուշանյան:

– Դատելով ՀՀԿ համապետական եւ տարածքային ընտրական ցուցակներից՝ կուսակցությունում ակտիվ սերնդափոխություն է կատարվում: Նոր սերնդի ներկայացուցիչներից եք նաեւ Դուք: Հետաքրքիր է, ո՞վ է Ձեր իդեալը քաղաքական, պետական համակարգում, ո՞ւմ կուզեիք նմանվել Ձեր նոր գործերում:

– Շատերն են ինձ համար ընդօրինակելի: Հատկապես հաճո է, երբ քաղաքական գործիչը խոսքի տեր է լինում, աշխատանքի մարդ է լինում, ում խոսքը գործից չի տարբերվում, մի խոսքով՝ այն ղեկավարներն են ընդօրինակելի, ովքեր Հայաստանի հանդեպ ունեն անկեղծ եւ իրական մտահոգություն, ովքեր կաբինետային որոշումներ չեն կայացնում, ամեն մի որոշում իրական կյանքի հետ առնչվելիս է ծնվում: Իմ իդեալը կարող է լինել (այդպես էլ կա) նաեւ շարքային մարդը, նրանից էլ շատ բան կարելի է սովորել ու ընդօրինակել, եւ սովորում եմ:

– Ո՞րն է պատգամավորի Ձեր պատկերացրած տեսակը:

– Պատգամավորը կապն իր ընտրողների հետ չպիտի կտրի, իր ընտրատարածքի հետ պիտի միշտ կապի մեջ լինի: Ընտրվելու դեպքում, բոլոր բնակավայրերում, որոնք գտնվում են թիվ 12 ընտրատարածքում, կունենամ տարածքային գրասենյակներ, որպեսզի հասանելի լինեմ մարդկանց, ապրեմ նրանց կյանքով: Չափահիշ չեմ համարում խորհրդարանի ամբիոնից հաճախակի խոսելը, բայց կարծում եմ՝ այդ ամբիոնից ժամանակ առ ժամանակ պետք է հնչեցվեն ընտրողների առավել կարեւոր մտահոգությունները: Եվ, իհարկե, ակտիվ օրենսդրական գործունեություն, ինչպես եւ գործադիր իշխանությանը վերահսկելու լիազորության պատշաճ իրացում: Այդ բոլորով հանդերձ՝ պատգամավոր լինելուց առաջ պետք է լինել լավ մարդ, լավ քաղաքացի:

– Որպես պատգամավորի թեկնածու, ըստ Ձեզ, ի՞նչ թերություններ, խոցելի տեղեր ունեք, որ կարող են խոչընդոտ հանդիսանալ նախընտրական քարոզարշավում, որ ընտրողի կողմից հասկացված չեք լինի:

– Մարդն ի սկզբանե մեղավոր է եւ սխալական: Ես էլ, ինչպես բոլորը, ունեմ թերություններ, բացթողումներ: Ուղղակի կարողանում եմ տեսնել թերություններս եւ ձգտում եմ հնարավորինս վերացնել դրանք: Մարդ պետք է զգա իր սխալը, ընդունի դա եւ մտածի դրա վերացման մասին: Հակառակ դեպքում կտրված կլինի ժամանակից, իրականությունից, հասարակությունից, եւ հասարակությունը նրան չի ընդունի:

– Եթե հանկարծ ապրիլի 2-ին ընտրողը Ձեզ չվստահի, Դուք կհիասթափվեք եւ հե՞տ կկանգնեք Ձեր ներկայիս՝ քաղաքականություն մտնելու մտադրությունից, բարեգործությամբ զբաղվելուց, թե՞ կշարունակեք ընտրած ճանապարհը՝ առանց հիասթափության, առանց ընկճվելու:

– Ես ընտրարշավի եմ ելել հաղթելու վճռականությամբ եւ համոզված եմ իմ հաղթանակում: Բայց, եթե ընտրողն ինձ չվստահի, ես կհարգեմ նրա այդ ընտրությունը նույնպես, եւ հետ չեմ կանգնի իմ ծրագրերից, քաղաքական դաշտ մտնելու ձգտումներից:

– Կուզեինք լսել Ձեր խոսքը՝ ուղղված թիվ 12 ընտրատարածքի ընտրողներին:

– Ես ընտրողներին չեմ ասի՝ ինձ ընտրեք: Ուղղակի ասում եմ, կոչ եմ անում՝ ապրիլի 2-ին քվեարկեք խղճի մտոք, լավ ծանոթացեք կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական ծրագրերին, տեսեք՝ արդյո՞ք այդ ծրագրերն իրատեսական են, որքանո՞վ են իրագործելի, դրանց իրականացման համար կա՞ն հիմքեր, թե՞ ոչ: Բոլորն էլ կարող են ասել՝ նվազագույն աշխատավարձը մեր ընտրվելու դեպքում դարձնելու ենք՝ ասենք 120 հազար դրամ, կամ կենսաթոշակի նվազագույնը կազմելու է՝ ասենք 70 հազար դրամ: Բայց ինչպե՞ս, դրա համար հանրապետությունում հիմքեր կա՞ն եւ որո՞նք են այդ հիմքերը: Իսկ միգուցե ազնիվ եւ անկե՞ղծ լինենք ընտրողների հանդեպ ու սուտ խոստումներ չտա՞նք:

Մեկ անգամ եւս հավաստիացնում եմ՝ ընտրվելու դեպքում կարդարացնեմ ձեր վստահությունը եւ կլինեմ Հայաստանի օրենսդիր մարմնի արժանավոր պատգամավորներից մեկը:

Հարցազրույցը՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՎ ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

Աժ պատգամավորի մեր թեկնածուն Առուշ Առուշանյանն է

ՍԵՎԱԴԱ ՋԱՔԱՐՅԱՆ
Վաստակաշատ ճարտարագետ

Առուշին ճանաչում էի որպես թաղամասի տղա, որպես գործարար Գագայի (Գագիկ Առուշանյան) տղա, ոչ ավելի: Դիպվածն օգնեց ինձ մոտիկից ճանաչել երիտասարդ մարդուն, որի համար շնորհակալ եմ:

Երկու տարի առաջ՝ ամռանը, նրանից հեռախոսազանգ ստացա, խնդրում էր հանդիպել: Հանդիպեցինք: Մտադրվել էր վերակառուցել, կարգի բերել Լաստ սարի ստորոտում գտնվող աղբյուրը, որից, չգիտեմ, ամառվա խիստ շոգի՞, թե՞ մի այլ պատճառով համարյա ջուր չէր ծորում, կաթկթում էր: Ինձ էր դիմել օգնելու, որպեսզի վերակառուցման աշխատանքների ժամանակ հանկարծ չվնասեն պատմական հուշարձանը:

Խարխլված, քարուքանդ վիճակում էր աղբյուրի կամարը, զուրկ տանիքից, երբեւէ եղած սալահատակից հատ ու կենտ քարեր էին մնացել, հենապատի միայն հետքերն էին երեւում, աղբյուրին մոտեցող արահետն անհետացել էր տատասկի տակ, շրջապատը համատարած աղբանոց էր հիշեցնում:

Վերջին շտրիխը գեղեցիկ խաչքարի տեղադրումն էր: Գործն ավարտելուց հետո շրջապատը կարգի բերելու ամբողջ ընթացքում բոլորիս աչքերն աղբյուրի քարե գուռին էր. ջրի կաթոցն ինչպես եղել, այդպես էլ մնում էր, չէր ավելացել: Բոլորս էինք անտրամադիր, բացառություն էր թերեւս միայն Առուշը, լավատես էր.

- Աստված տեսնում է, ամեն ինչ լավ է լինելու:

Այդ օրերի ընթացքում մի բացահայտում էլ արեցի, որ Առուշն ազնիվ քրիստոնյա է: Մի երկու օրից նրանից դարձյալ հեռախոսազանգ ստացա: Պայմանավորվեցինք հանդիպման մասին: Մեքենայով մոտեցավ մեր տանը: Բարձր տրամադրություն ուներ: Ոչինչ չհարցրի: Մեքենան ուղղեց դեպի Հին Գորիս: Գնում էինք բարեկարգված սրբավայր: Մեքենան ներքեւում թողեցինք: Աղբյուրին մոտենալիս նա մի տասը-տասնհինգ քայլ առաջ անցավ: Երբ ես էլ մոտեցա աղբյուրին, նա ժպիտը դեմքին ինձ մեկնեց ջրով լցված բաժակը: Բերնեբերան լցված քարե գուռից առաջվա նման ջուր էր հոսում: Ուրախ էինք, այնքան ուրախ, որ կողքից նայողին կարող էր թվալ, որ աղբյուրը ոչ թե վերակառուցել, այլ մենք էինք կառուցել:

Այս դեպքից հետո կամա-ակամա հետեւում եմ Առուշի գործունեությանը՝ նրա մեջ տեսնելով նոր սերնդի ներկայացուցչին:

Գաղտնիք չէ, որ մեր ժողովրդի զգալի մասի հավատն իշխանությունների գործունեության նկատմամբ վաղուց սասանվել է: Հասարակության չքավոր խավը, իսկ այն նույնիսկ պաշտոնական տվյալներով մեր բնակչության մեկ երրորդից ավելին է, տնտեսական ծանր վիճակի հետ չի կարողանում թոթափել նաեւ հոգեկան ճգնաժամը:

Հանրապետության նոր վարչապետի ձեռնարկումները թույլ են տալիս մեզ լույս նկատել թունելի վերջում: Առուշի եւ նրա նման նոր մտածելակերպով երիտասարդների՝ օրենսդիր մարմին մուտք գործելու հեռանկարն ամրապնդում է նման լավատեսությունը: ■

Մեր երկրի պայծառ ապագան տեսնում եմ իմ ժողովրդի համընդհանուր բարեկեցության մեջ

Խոսք բնտրողին

Սիրելի հայրենակիցներ

Ձեզանից շատերին հավանաբար հետաքրքրում է այն հարցը, թե ինչու եմ առաջադրվել ԱԺ պատգամավորի թեկնածու: Ես դա չեմ արել իմ եւ ընտանիքիս բիզնեսն ապահովագրելու համար, ոչ էլ նյութական նոր եկամուտներ ակնկալելու կամ էլ անձնական այլ ամբիցիաների համար: Ես մեր երկրի քաղաքացին եմ եւ, բնականաբար, տեսնում եմ այն փոփոխությունները, որ Հայաստանն ապրել է անկախացումից ի վեր:

Աշխարհի ցանկացած անկյունում մեր հայրենակիցները կարողանում են, ինչպես ժողովուրդն է ասում, գլուխ բարձրացնել, ստեղծել, արարել… Օտար միջավայրում, անծանոթ՝ լեզվին ու սովորույթներին, կարողանում են ինտեգրվել ու ապրել բարեկեցիկ կյանքով, իսկ իրենց հայրենիքում, իրենց հողի վրա՝ ոչ: Այո, ամեն տեղ ստեղծում ենք, բայց դա արվում է օտար երկրում եւ ի վերջո՝ օտարի համար: Վիրավորական է…

Որոշ ժամանակ առաջ մեր երկրի հարգարժան վարչապետն իր ելույթներից մեկում ակնարկեց, թե տարածաշրջանում եւ աշխարհում ինչ դիրք ու դերակատարում ունի ընդամենը հիսուն-վաթսուն տարվա պատմություն ունեցող, մեր երկրից էլ փոքր Իսրայել պետությունը: Հայտնի փաստ է, որ երբ ամերիկահայ համայնքի ներկայացուցիչները դիմել են այդ երկրի նախագահին՝ օգնելու լուծել հայկական հարցը, նա շատ հակիրճ պատասխան է տվել՝ հարստացեք եւ ինքներդ կլուծեք ձեր հարցը: Հասկանալի է, նա նկատի ուներ Իսրայելի փորձը: Նման օրինակներ էլի կան՝ զորօրինակ Սինգապուրը եւ այլն: Ինչո՞վ ենք մենք պակաս նրանցից: Շատերի նման ես էլ մեր երկրի պայծառ ապագան տեսնում եմ իմ ժողովրդի համընդհանուր բարեկեցության բարձրացման մեջ: Բայց, ինչպես մեր նախագահն է երիտասարդ քաղաքական գործիչներին ուղղված յոթ խորհուրդներում ասում, պետք է հեռու մնալ ցնցումներից, «կուլակաթափության կոչերով ոչ մի տեղ չեք հասնի»: Իմ պապ Սամվելի գերդաստանն անցել է այդ ճանապարհը: Պետք է հարստանա ամբողջ երկիրը: Իսկ դա հնարավոր է միայն նպատակասլաց ու հետեւողական աշխատանքով, որի օգնությամբ կլուծվի նոր աշխատատեղերի ստեղծման հարցը, ասել է թե՝ հայ մարդը, իմ հասակակիցները, մեզանից հետո եկողները կդադարեն բախտ փնտրել օտար ափերում:

Մենք նավթ ու գազ չունենք, երկրում քիչ են նաեւ բնական այլ հանածոները: Սրա համար պետք չէ մեղքն Աստծո վրա բարդել: Ես հավատով մարդ եմ եւ համոզված եմ, որ Աստված ամենատես է, տեսնում է ամեն ինչ ու դրա հետ մեկտեղ նաեւ արդարամիտ է: Մեզ հեշտ ապրելու, արագ հարստանալու բնական ռեսուրսներ քիչ է տվել, բայց դրա փոխարեն տվել է անսահման աշխատասիրություն, կամք՝ ցանկացած դժվարին պայմաններից դուրս գալու ունակություն, անսահմանության ձգտող անալիտիկ (վերլուծական) մտածելու ունակություն, որով հպարտանում ենք բոլորս: Մարդն է մեր հիմնական կապիտալը, հարկ է, որ արդյունավետ օգտագործենք այն:

> *Անկախացումից հետո մեր երկրում ձեւավորված նոր սերնդի ներկայացուցիչներից մեկն եմ: Մեր սերունդն ասպարեզ է գալիս նոր մտածելակերպով՝ ազատ՝ մեր տարածաշրջանում տարիներ ի վեր արմատացած անվստահության եւ բացասական այլ նախապաշարումներից:*

Հին կտակարանում կարդացել եմ, որ մարդը ստրուկ է դառնում, երբ մտածում է ստրուկի նման: «Ինչ արժե ազատությունդ, եթե դրա սահմանները չես հարգում: Անօրինական ճանապարհով օրինականություն հաստատել չի լինի»: Սրանք իմ խոսքերը չեն: Այսպես է խորհուրդ տալիս մեր երկրի նախագահը:

Ես ձեզ հուսախաբ չեմ անի…

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ԱԺ պատգամավորի թեկնածու
Հայաստանի հանրապետական կուսակցությունից

ԱՐՄԻՆԵ ԿՈԼՅԱՆ

Սերո Խանզադյանի անվան Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Չորրորդ դասարանից սկսած մինչեւ ութերորդ դասարանն ավարտելն Առուշի դասղեկն եմ եղել, նաեւ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհին: Սրանք այն տարիներն են, երբ ձեւավորվում է ապագա անհատը: Նախապես ցանկանում եմ ասել, որ ուրախ ու հպարտ եմ նման անհատի ուսուցման, դաստիարակության, ձեւավորման գործում իմ ներդրումն ունենալու համար:

Առուշն աշխույժ, մի քիչ չարաճճի, չափազանց ընկերասեր, բարի երեխա էր, միշտ կանգնած թույլի կողքին, իր ընկերների թիկունքին: Այն տարիներին արդեն տեսանելի էր ամեն ինչում առաջինը լինելու նրա ձգտումը. աճում էր ապագա լիդերը: Բայց այս ամենով հանդերձ նրա շարժուձեւից երբեք չէիր կարող հետեւություն անել, որ երեխան ունեւոր ծնողների զավակ է: Եթե այս փաստը բացատրենք միայն նրանով, որ նա չէր գիտակցում իր ընտանիքի նյութական առավելությունները մյուսների նկատմամբ, ապա սխալ կլիներ, որովհետեւ տարիք առնելու հետ էլ չկորցրեց մարդկային այս հրաշալի որակները, հուրախություն շատերի, նաեւ ինձ, նա չփոխվեց:

Հաճույքով էր սովորում, գրքասեր էր: Դասերին միշտ պատրաստ էր ներկայանում: Ակնհայտ էր, որ ծնողներն ինչքան հոգատար, նույնքան էլ խստապահանջ են երեխայի նկատմամբ: Ութերորդ դասարանն ավարտեց գերազանց գնահատականներով:

Խորհրդային իշխանության անկումից հետո քիչ ժամանակ չի անցել: Առուշը, նրա հասակակիցներն անկախության սերունդն են, նոր ձեւավորվող հասարակության սոցիալական շերտավորումն ակնհայտ էր, իսկ այդ շերտերի նկատմամբ վերաբերմունքը՝ ոչ միանշանակ: Խորհրդային տարիներին մարդկանց գիտակցության մեջ խորն էր նստած այն միտքը, որ հարստությունը, հարուստ լինելը շատ վատ բան է: Այս կարծրատիպը հասարակության մի զգալի մասի մեջ դեռ մնում է: Ճիշտ է թե սխալ՝ չգիտեմ, բայց դա փաստ է:

Անկեղծ ասած այսօր էլ իմ սաների մեջ կան ունեւոր ընտանիքների զավակներ: Երբեմն ինձ բռնում եմ այն մտքի մեջ, որ այդ երեխաների շարժուձեւը, վարքը, վերաբերմունքն իրենց հասակակիցների, ավագների, ուսուցիչների նկատմամբ, ակամայից համեմատում եմ տարիներ առաջվա Առուշ-աշակերտի նման որակների հետ: Բոլորովին կողմնակալությունից զերծ հայտարարություն եմ անում՝ արդյունքը միշտ նույնն է՝ հօգուտ Առուշի: Ու հենց այդ ժամանակ էլ երկրորդ միտքն է ծագում, իսկ ի՞նչ կլիներ, եթե բոլոր կայացած անհատները նրա նման լինեին: Համոզված եմ, բոլորիս հոգսերը մի փոքր քիչ կլինեին:

Երկու տարի առաջ միայն մի ակնարկից հետո նա հիմնանորոգեց երկու դասասենյակ, մշտապես հոգում է ոչ ունեւոր երեխաների գրենական պիտույքների ձեռքբերման փոքր հոգսերը: Արվածը փոքր է, բայց նման փոքր հարցերից էլ երեւում է նրա վերաբերմունքն իր քաղաքի վաղվա օրվա պատասխանատուների, իր ուսուցիչների նկատմամբ:

Փոքր քաղաքում ենք ապրում, հաճախ ենք հանդիպում իրար: Գերագույն հաճույք եմ զգում, երբ նա ինձ բարեւում է՝ դիմելով «ընկեր Կոլյա» արտահայտությամբ: Այդ պահին աշխարհն ինձ են տալիս: Կարծես ժամանակն անզոր է եղել՝ էլի ես նրա դասղեկ-ուսուցչուհին եմ, իսկ նա էլ՝ իմ աշակերտը: Շտապում եմ ուրախությունս կիսել աշխատանքային ընկերներիս հետ: Պարզվում է, որ նրանք էլ անմասն չեն մնում նման հաճելի պահերից:

Շատ ուրախ եմ, որ առաջադրվել է պատգամավորի թեկնածու: Արժեւորում եմ Առուշին: Նրա նմանները երկրի օրենսդիր մարմնում շատ, շատ անհրաժեշտ են: ■

ՀԱՄԼԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ

Առուշ Առուշանյանը սովորել եւ ավարտել է Գորիսի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը «Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012-2014թթ. ուսումնական տարիներին շարունակել ուսումը նույն ֆակուլտետի մագիստրատուրայում՝ պաշտպանեով «Աշխատավարձի եւ աշխատանքային հարաբերությունների կարգավորման շուկայական մեխանիզմը» թեմայով մագիստրոսական թեզը՝ ստանալով տնտեսագիտության մագիստրոսի աստիճան:

Նրա ուսումնառության տարիներին դասավանդել եմ մասնագիտական առարկաներ, բացի այդ եղել եմ նաեւ ֆակուլտետի դեկան, հնարավորություն ունեցել նրան ճանաչել համակողմանիորեն:

Գորիսում ինձ նմանները շատ են, ովքեր ճանաչում են նրա հորը, նրա աշխատասեր ու ստեղծարար տոհմի մարդկանց: Հայտնի խոսք կա, որ ասում է՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում: Այս իմաստությունն օգտագործվում է թե՛ դրական, թե՛ բացասական իմաստով: Սկզբնական շրջանում, երբ նկատեցի, որ Առուշն ավտոմեքենայով է գալիս դասերի, մտածում էի, որ ապահով կյանքը, նյութական հնարավորությունները շփացրել են նրան: Մինչեւ մեր համալսարան նրա ընդունվելը մի քիչ ավելի, մի քիչ պակաս նյութական ապահովվածությամբ ուսանողներ էլի եմ ունեցել: Որպես կանոն մտավախություն նրանց պարագայում ճիշտ է եղել՝ նմաններն ընկերներից իրենց բարձր էին դասում եւ դա չէին էլ փորձում թաքցնել: Առուշը հաճելիորեն տարբերվում էր նրանցից: Հակիրճ բնութագրեմ՝ կազմակերպված է, աշխատասեր, ընկերասեր եւ արդարամիտ:

Կյանքն այնպես է դասավորվել, որ համալսարանում սովորելուն զուգահեռ նա ղեկավարել է նաեւ կենցաղային էլեկտրասարքավորումների եւ կահույքի վաճառքի իրեն պատկանող կազմակերպությունը, հնարավորություն ունեցել ստացած տեսական գիտելիքներն անմիջականորեն կիրառել պրակտիկ աշխատանքում: Որպես նրա պաշտպանած մագիստրոսական թեզի ղեկավար՝ դա ակնհայտ էր ինձ համար, բայց նկատելի էր նաեւ ուսանող ընկերներին: Առուշը թեզում կարեւորել է աշխատանքային հարաբերություններում սոցիալ-հոգեբանական պահի առաջնահերթությունը, անհատական աշխատանքը երիտասարդ, հեռանկարային կադրերի հետ: Նա կարողանում է համալսարանական տեսական գիտելիքներն անմիջականորեն կիրառել պրակտիկ գործունեության մեջ, կոնկրետ օրինակներով ցույց տալ, որ շուկայական տնտեսվարման պայմաններում աշխատանքի արդյունավետ կազմակերպման, աշխատանքային հարաբերությունների կարգավորման ճիշտ կիրառումը հաջողության երաշխիքն է:

Առուշի մոտ ակնհայտ են նպատակասլացությունը, կազմակերպական բարձր ունակությունները: ■

Սաֆ հայրենի եզերքի մասին

Խոսք մեծաց

...Որիշ էր Կյորեսի լեզուն, որով խոսում էին Հին ճանապարհի բնակիչները, հին շուկայի արհեստավորները եւ խոսում էին կամուրջից այն կողմը՝ Շենի բոլոր թաղերում…

Ինչ չքնաղ լեզու էր կյորեսերենը… Չուտեիր եւ չխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր եւ նուրբ հնչյուններով խոսում էր լվացարարուհի Մինան, ինչպես էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում, եւ բառերը նստում էին, ինչպես փափուկ մալանչները: Հապա Դոլուն Կարին… Կռանում էր սառն աղբյուրի վրա, կուշտ խմում եւ ջուրը բեղերից կաթկթելով ասում էր խուվա՜յ… եւ այնպես էր ասում, այդ բառն այնպես էր զրնգում, որ եթե աղբյուրը նորահարս լիներ, ամոթից քողը կքաշեր երեսին… Իսկ Աթա ապերը, երբ բարկանար, այնպես մի ըմբո կասեր, որ Մեղրաքերծը կդրնգար:

Գորիսի ոչ մի փողոցում լեզուն այնքան վճիտ չէր, ինչպես Հին ճանապարհի վրա: Այդ լեզու չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ. այդպես Ղաթրինի ձորում երգում էր կաքավը եւ մթնում կարկաչում էր Ցուրտ աղբյուրը:

– Տիեզերի հացերը մրսել են, - կասեր Աթա ապերը, չուխայի փեշից պոկելով փուշը, որ կպել էր արտի մեջ, բայց այնպես կասեր, կարծես խնդրում էր մի կարպետ, որ ծածկի արտերը:

– Հորա՜ է, հորա՜, - եւ էլ ուրիշ ոչինչ չէր ասի Աթա ապերը, բայց այդ մի բառը կասեր դանդաղ, ծանր եւ արքայավայել, կասեր ինչպես հանդերի պատրիարք…

Աթա ապերը կարտասաներ երկու տող «Գորիսի գովքից», բայց այնպես կասեր, որ իբրեւ իջնում է խոր ձորերը եւ բարձրանում է բարձր լեռները, եւ լեռնային քամու նման լեզուն պտույտք է անում դեպի երկինք:

Այդքան գեղեցիկ եւ հնչեղ էր Կյորեսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով եւ վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փռված էր Հաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում եւ մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները, եւ պատահում էր, որ Մինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը եւ լվանում էր, Մինան լաց էր լինում, եւ նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն…

Ակսել Բակունց,
հատված «Կյորես» վիպակից

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 5000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 07.03.2017թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: